ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
‹‹ԱՐԹԼԱԲ›› ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

‹‹ԱՐԹԼԱԲ›› ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնի ղեկավարը և անձնակազմն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են հետևյալ սկզբունքներով.

- ապահովել անկողմնակալությունը՝ սպառնացող ռիսկերի շարունակաբար բացահայտման և բացահայտված ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու միջոցով,
- զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կնվազեցնեն իրազեկության և գործունեության ճշտության նկատմամբ վստահությունը,
- հայտատուների հետ լինել ազնիվ և ձեռք բերել նրանց բարձր վստահությունը,
- պահպանել օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Սերտիֆիկացման մարմինը չի հանդիսանում.

- սերտիֆիկացված արտադրանքի նախագծողը, արտադրողը, տեղադրողը, բաշխողը կամ պահպանողը,
- սերտիֆիկացված գործընթացի նախագծողը, իրականացնողը, գործարկողը կամ սպասարկողը:

Սերտիֆիկացման մարմինն իր հայտատուներին չի առաջարկում կամ տրամադրում խորհրդատվություն, ինչպես նաև կառավարման համակարգի խորհրդատվություն կամ ներքին աուդիտ, երբ սերտիֆիկացման սխեմայով պահանջվում է հայտատուի կառավարման համակարգի գնահատում:

Սերտիֆիկացման մարմնի ղեկավարը և անձնակազմը պարտավորվում են ապահովել անկողմնակալություն և զերծ մնալ ֆինանսական ճնշումներից:

Տնօրեն՝ Գ. Մարտիրոսյան

25.09.2025թ.